11. ԻՄԱՍՏՈՒՆ ՔՈՒՌԱԳԻ ՀԵՔԻԱԹԸ

Կէղնի չի էղնի մե թագավորմ։ Էդ թագավորին իրեք տղա կունենա, մեծ երկուաը կարգած, մեկը աղար կէղնի։ Օր էդ թագավորը կվախճանի մեծ տղեն թաղթը կնստի, իսկ ամենափոքրը կէրթա ուսումնարան կարդալու։

Թագավորի հարսները՝ մեկը նազիրին կը սիրե, մեկը՝ վազիրին, դրա համար մտածեցին վախտով իրանց փոքր տեքորը կորցնեն, քանի փոքր է, օր հետո իրանց սրոը այան չը հանե։ Կանչեցին իրանց նոքյար Արաբին ու ասացին.— Տանիս էս տղին մեշի մեջը կմորթես ու արնոտ շարիկը մեզի կբերես։

Արաբը առավ տղին ու գնաց մեշեն, չղմշավ մորթել, ճիկութը կտրեց, շաբիկը արյունոտեց ու բերավ հարսներուն տվավ թե՝ մորթեցի։ Արաբին բավականի փող տվին թե՝ աղբրտանցը բան չըսես։

Թող հարսները իրանց քեֆը շարունակեն, մենք էրթանք տղի քովը, թե ինչ էղավ։ Տղեն ծառեն կապած լաց կէղներ, կճվար, այդ մեշի միջի ճանփովը մեկ բազրգյանմ ապրանք կտաներ ծախելու։ Տղի ձենը բազրգյանի հ՚անգաջը ընկավ, կանգ առավ, ծառաներին ղրկեց թե.— Գնացե՛ք տեսեք ի՞նչ ձեն է։

Ծառաները էկան թե այսպես.— Մեկ ջահել տղեմ կապած է ծառեն։— Բազրգյանն ըսավ.— Գնացեք, արձակեք, բերեք։

Տղին բերին, բազրգյանն ըսավ.— Նստեցրեք ձիուն, թող հետ-

ներս գա.— մատին էլ գեղ արավ, սաղցրեց ու բեռները ծախեց. գնացին իրանց տունը։

Բազրգյանը կնկանը ըսավ թե.— Մենք տղա չունեինք, ահա աստված մեշի միջեն մե տղեմ տվեց. դեհ, լսե պատմեմ, թե ինչ տեսակ գտանք. Մեշի միջեն անցած վախտը ձեն առանք, գնացինք տեսանք, օր տղա է կապած ծառեն, արձակեցինք բերինք, մեկ էրկու օրվա ճամբա եկանք։ Մեկ էլ եկանք մե մեշի մեջ բեռները վար բերինք, որ ձիանն արաձեն, ձիանները արաձեցին, մենք էլ հաց կերանք վերջացրինք, ելանք թատարուք տեսանք, որ ճամբա ընկնինք, տղեցինք տղեն չկար։ Ծառաները ման եկան՝ գտան, տեսան որ մեկ փոքր լղար քուռագ վեր ընկած, տղեն էլ քովը կայնել է։ Ըսին. «Քելե էրթանք», ըսավ որ. «Ես չեմ գա, թե այս Քուռագին էլ հետներդ կտանիք, ես էլ գուքամ, թե չէ՝ կմնամ ըստեղ»։ Ես էլ տղե խաթրենը չանցա, Քուռագին էլ ձիանոց վրա դնել տվի ու մի քանի օր էկանք։ Քուռագին շատ գարի դարման տվինք՝ սկսեց քելել իրա ոտքով, ահա, սա էլ այն Քուռագն է։

Բազրգյանն ու իրա կնիկը շատ ուրախացան, քանի որ իրանք ժառանգ չունեին, տղին շատ լավ փափուկ կպահեին, տղեն էլ իրան բերած Քուռագին շատ լավ կպահեր, կպաշտպաներ։

Անցավ մե միջոցմ։ Հիմի խապարը տանք էդ տղի հարսներեն։ Նրանք իմացել էին, որ տղեն սաղ է, Թեյրան քաղաքը բազրգյան բաշու քովն է։ Տղի հարսները գնացին մեկ ջադու պառավմ գտան ու ըսին.— Պառավ, գնա դու էն տղին գտի, մեկ կերպովմ կյանքը վերջացու, քեզի ինչքան որ փող ուզես կուտանք։

Պառավն էր, գնաց հեձավ խնոցին, օձն առավ ձեռը ղամչի էրավ, ելավ երկնքի օխտը ղաթը ու գնաց հասավ Թեյրան քաղաքը։ Քաղաքի ղրաղը օձը գցեց խնոցու մեջը, մե առանձին տեղմ պահեց, ինքը մտավ քաղաք։ Մե քանիմ օր ման էկավ քաղաքի մեջ, ամեն բան իմացավ։ Էդ քաղաքի մեջն էլ թագավորը իրան համար թանկագին պալատ էր շինել տալիս այս պայմանով, որ թե մեկ երեխա էլ ըսե. «այս պակասությունն ունի» հիմքեն հետ քանդել կուտա։ Էդ ձենը պառավի ականջը ընկավ, ըսավ. «Էս լավ էղավ, իմ բանս հաջող գնաց»։ Պալատն էլ շինել էին, լմնալով էր, պառավը գնաց պալատի կողքեն անցավ, աչքը վերև քցեց ու ըսավ.— Հե՜յ վա՜խ, լավ է, լավ, մեկ բանմ պակաս է։

Թագավորին էկան ըսին, որ մե պառավմ էկավ անցավ, նայեց ու ըսավ. «Հեյ վա՜խ, լավ է, լավ, մե բանմ պակաս է»։ Հրամայեց քանդել հիմքեն, նորեն սկսեց ավելի լավ շինել տալ։ Շինությունը

վերջացավ, պառավը նորեն էկավ ըսավ.— Հեյ վա՜խ, լավ է, լավ, էլի մե բանմ պակաս է։

Նորեն քանդել տվավ։ Այս անգամ սկսեցին ամենեն լավ շինել ու թագավորն ասաց.— Ով որ դուքա կըսե. «Մե բանմ պակաս է», բռնեք բերեք քովս։

Երրորդ անդամն էլ պառավը չհավնավ, բռնին տարան թագավորի քովը։

Թագավորն ըսավ.— Ա՜յ պառավ, դու էս ի՞նչ ես իմացել, իմ խաղնիս դուշման ես, օր իրեք անգամ է գլուխ բերած շինությունս քանդել ես տալիս, ի՞նչ պակասություն ունի, ինձ ըսա։

Պառավն ըսավ.— Օխտը սարի ետև քառասուն դևերի մեջ շամշրաղ փետմ կա, թե օր բերիր էն էլ պալատիդ մեջը դրիր, զօր ու գիշեր լուս կուտա, էլ ճրագ լուսի կարոտ չի էղնի։

Թագավորն ըսավ.— Էդ փետը ո՞վ կարա բերի։

Նա թե.— Էս քաղաքի բազրգյան բաշու տղեն կարա բերի։

Մարդ ղրկեց թագավորը, բազրգյանին ու տղին կանչեց։

Բազրգյանն ըսավ.— Մեզի հետ ի՞նչ գործ ունի թագավորը, ի՞նչ պտի ըսե։

Նրանք թե.— Տղին անպատճառ կանչում են թագավորի հրամանովը։

Տղին ղրկեց։ Տղեն գնաց թագավորին գլուխ տվեց, կայնավ։ Թագավորն ըսավ.— Տղա, գիտե՞ս քեզի ինչի համար եմ կանչե, քեզ կանչել եմ, օր էրթաս օխտը սարի ետևը, քառասուն դևի մեջը շամշրաղ փետմ կա, բերես, թե բերիր՝ քեզի բավականի պարգև կուտամ, թե չէ՝ գլուխդ կկտրեմ։

Տղեն ելավ տխուր, տրտում գնաց իրան Քուռագի քովը, լաց էղավ ու ըսավ.— Աստված, ես ի՞նչ անեմ, ոչ մի տեղ չիտեմ, ո՞ր տեղից բերեմ։

Աստծու հրամանովը Քուռագը լեզու ելավ ու տղին ըսավ.— Տղա,— ըսավ,— լաց մի էղնի, էդիկ կբերենք, դու ետի բանեն վախեցի,— ձին ըսավ,— պատրաստվինք էրթանք, ես տեղը գիտեմ։

Տղեն ձին նստավ ու գնացին, գնացին սարին օր մոտեցան ձին տղին ըսավ.— Դևերը քառասուն օր կքնին, դու ինձի էնպես ուզանգով փորիս քովը կզարդես, օր ոտներս դևերին չհասնի, թռնիմ փետի քովը, դու իջի, թոկով կապե շլնքես շամշրաղը, էլի հեծի, ես թռնիմ գուքամ, համա սար, ձոր, քար կճվան. «Տարա՜վ ինսանօղլին», ետ չաշես, թե չէ, ես էլ քար կդառնամ, դու էլ, մինչև օր իջնինք սարի տակը ետ մի աշե։

Ու այնպես էլ արին, փայտը բերին պալատի տակը գցեցին։

Թագավորը կանչեց տղին, բավականի օսկի տվեց, փայտը տեսավ, շատ ուրախացավ, թե պառավը հաստատ շատ լավ բանի տեղ ասեց. ուստա բերավ, որ փայտը ներսը սարքեն, ինչպես օր կարգն է։ Ուստեն էկավ փետը տաշելու։ Ուրագը չտաշեց, սղոցը չկտրեց, ուստեն ըսավ՝ իմ հաշաթս չբանավ, թագավորն ապրած կենա։

Նա թե.— Կանչեցեք գա պառավին։

Պառավին բերին, թագավորն ըսավ.— Ա՛յ պառավ, էս ինչպե՞ս պտի էղնի, մեր ուստի հաշաթը սրա վրա չի բանում։

Պառավն ըսավ.— Էդ փետին իրան հաշաթը պետք է էղնի, օր բանի։

— Ով կարա բերի,— ըսավ թագավորը։

Պառավն ըսավ.— Բազրգյան-բաշու տղեն։

Մարդ ղրկեց տղին բերել տվավ ու ըսավ.— Տղա, գնա սրա հաշաթն էլ բեր։

Տղեն էլ տխուր, տրտում գնաց ձիու քովը նստեց ու լաց էղավ։ Ձին էլի խոսաց թե.— Տղա, մի վախենա, էդ էլ կբերենք, ետի բանեն վախեցի։

Տղեն ձին սարքեց, հեծավ գնաց։ Գնացին սարի տակը, ձին ըսավ.— Տղա, հաշաթները տոպրակով ծառեն կախած է, ես կմոտենամ ծառին, դու առ ու դառնանք։ Ետևներես էլի սար ու քար կճվան թե. «Ինսանօղլին տարա՞վ», ետ չաշես, թե չէ՝ ես էլ քար կդառնամ, դու էլ։

Էնպես էլ առան ու բերին, տվին թագավորին։ Թագավորը կանչեց ուստին ու ըսավ.— Հաշաթները բերինք, դեհ արի սարքե։

Ուստեն էկավ հաշաթները չկարաց բանցնե։ Թագավորը ըսավ.

— Կանչեք պառավին։

Պառավն էկավ, թագավորն ըսավ.— Ա՛յ պառավ, էս ի՞նչ բան է, ուստեն չկարաց բանցնե հաշաթները։

Պառավն ըսավ.— Հալբաթ չի կարա, դրա ուստեն պտի գա, օր իրան հաշաթները բանցնե։

— Ով կարա բերի։

Ըսավ որ.— Էլի բազրգյանի տղեն։

Կանչել տվին բազրգյանի տղին։ Տղեն էկավ, թագավորն ըսավ.

— Ա՛յ տղա, գնա սրա ուստեն բե։

Տղեն ըսավ.— Ես ուստեն ո՞րտից բերեմ, կամ ո՞ւրդից գտնիմ։

Թագավորն ըսավ.— Բերիր՝ բերիր, չբերիր՝ գլոխդ կկտրեմ։

Տղեն էլ տխուր, տրտում գնաց ձիու քովը ու լաց էղավ։

Զին ըսավ.— Ես որ ասում էի թե ետի բանեն վախեցի՝ էս էր։ Հաշրթների տերը մեռած է, էլ ֆայդա չունի, ես գերեզմանի տեղը գիտեմ, էրթանք առավոտուն հետ, բարի լսին գերեզմանի քովը աղոթք անենք, աստված բալքի ձեներս լսե՝ ուստին սաղցնե, գա, տանինք։

Մյուս օրը առավոտուն բարի լուսին գնացին գերեզմանի քովը, աղոթք արին, շատ արտասունք թափեցին ու ըսին.— Աստված, դու էսոր կենդանություն տաս, տանինք, թագավորի ու պառավի ձեռքեն ազատվինք։

Աստված էդոնց ձենը լսեց ու ուստին սաղցրեց։ Ուստեն առաջ ընկավ ու գնաց դեպի թագավորի քովը։ Գնաց իրան շամչրաղ փետի ու հաշրթներու վրա կայնավ։ Թագավորը տղին բավականի օսկի տվեց ու ճամբու դրեց։

Ուստեն կանչեց թագավորին ու ըսավ.— Թագավոր, դու ինչի՞ մեկ պառավի խոսքով տղին էդքան չարչարեցիր, նրա միտքը էն է, օր տղեն ետ չգար, վերշը ընձի էլ գերեզմանիս միշեն հանեցիր, քու պալատդ էլ տակ ու վրա էղնի, քու թախտդ էլ, ինձի մեռած տեղես հանեցիր, չես թողնի որ մեռելներն էլ դադարին։

Ըսավ չըսավ պալատը իսկույն տակ ու վրա էղավ, ուստեն առավ իրան հաշաթներն ու փետը, գնաց։

Պառավն օր էս բանը լսեց, հեծավ իրա խնոցին, օձե ղամշին առավ ու փախավ դեպի հարսների երկիրը։ Գնաց խաբեց, թե տղին վերջացրի։ Թագավորի հարսներն բավականի փող տվին պառավին ու մնաց միշտ հարսներու մոտը։ Էսոնք թող էստեղ մնան, մենք էրթանք բազրգյան-բաշու տղի մոտ։

Տղեն մե օրմ բազրգյանին ըսավ.— Ես պտի էրթամ իմ հայրենիքս։ Բազրգյանն ու կնիկը շատ լաց էղան, թե մենք ենք քու հայրդ ու մայրդ, դու էլ ո՞ւր կէրթաս։

Տղեն ըսավ.— Չէ, ես պտի էրթամ, մեկ օր էլ թագավորը մե ուրիշ բանի կղրկե, կէրթամ ու էլ ետ չեմ գա, ավելի լավ է վախտով հեռանամ,— ըսավ, ձին դուրս քաշեց, հորն ու մորը մնաս բարով արավ, առավ ձեռները պաչեց ու ըսավ.— Օրհնող էղեք։

Հերը բերավ բավականի օսկի տվավ։ Հեծավ ձին ու ընկավ ճամբա, գնաց։ Շատ ու քիչն աստված գիտե, հասավ, տեսավ մե բազրգյանմ չայիր-չիման տեղմ բեռները թափել է, ձիանները կարածացընե։ Ինքն է գրանցեն խելիմ հեռու ձիուցը իջավ, թողավ ձին արածելու։ Քիչմ կեցան բազրգյանը մարգ ուղարկեց տղին կանչեց ու ըսավ.— Արի մեր մոտ։

Տղեն ձին քաշեց, գնաց բազրգյանի մոտը։ Տղի ձին տեսնելու պես, բազրգյանի աչքը ընկավ ձիու վրեն։ Բազրգյանը ինքը մե ֆելգար մարդ էր, ըսավ.

— Այ տղա արի աչքախփուկ խաղանք, թե դու ինձի գտար, ես իմ սինիս քեզի տամ, ես իմ սինուս մարիֆաթը քեզի ըսեմ, սինիս օր էսպես վեր դնեմ, ըսեմ սինի բացվի, կբացվի ու աստված ինչ տեսակ կերակուր օր ստեղծել է, մեշը կգտնվի, ով որից գուզե թող ուտե։

Լավ, հոժար եմ,— ըսավ տղեն,— թե չգտա ես էլ իմ ձիս կուտամ քեզի։

Տղեն մտածեց՝ էս գուզ տեղը ուրտեղ պտի պահ մտնի, որ չգրտնիմ, ու դրա համար է հոժարացավ։

Բազրգյանն ըսավ նոքարներին.— Տղի աչքերը բռնեցեք.— ու ինքը կորավ, անհետացավ։

Նոքարները տղի աչքերը բացին ու ըսին.— Դեհ, գտի։

Տղեն ման էկավ բազրգյանի բեռների մեջը՝ չգտավ, ուրիշ որտեղ ասես ման եկավ՝ չգտավ։ Առավոտեն մինչև ճաշ ման գալով տղեն հալաք էղավ՝ չգտավ։ Գնաց ձիու քովեն ման գալով անցներ պտի, ձին կանչեց քովը, ըսավ.— Ա՛յ տղա, արի քովս ըսեմ տեղը,— ըսավ,— էնիկ տիա ձուկ էղավ ընկավ գոլը, գնա, ասա. «Բազրգյան, ձուկ էղար ընկար, գոլը, դուս արի, թե չէ թոռ կբերեմ հանել կուտամ ամոթով կէղնիս»։

Էն սհաթը բազրգյանը գոլեն էկավ նոքարներուն հերսոտավ, թե.— Աչքերը լավ չէիք բռնել, օր տեսավ։

Բազրգյանը ըսավ.— Նորեն աչքերը լավ բռնեք։

Բռնեցին, կապեցին տղի աչքերը, բազրգյանը նորեն կորավ, տղի աչքերը թողին թե՝ գտի։ Տղեն խելիմ ման էկավ ու էլի գնաց Քուռագի մոտ, Քուռագն ըսավ.— Մուկ էղավ, մտավ մկի ծակը, գնա ըսա. «Բազրգյան մուկ էղար մտար ծակը, դուս արի, թե չէ ջուր կբերեմ լցնեմ՝ կխեխտիս»։

Գնաց, ըսելու պես բազրգյանն ելավ, ըսավ.— Շարդը իրեքեն է։

Էս անգամին էլ ըսավ.— Բռնեցեք,— ու էլի կորավ։

Տղի աչքերը բաց թողին թե՝ գտի։ Տղեն մե սհաթմ դանգլի ման էկավ ու գնաց ձիու մոտը, ձին ըսավ.— Էս անդամ էլ անկշմտուկ էղավ ու գնաց մտավ ջաղաչի էրկու քարի արանքը։

Գնաց ըսավ.— Բազրգյան, անկշմտուկ էղար, մտար ջաղչի երկու քարի արանքը, դուս արի, թե չէ ջուրը բաց կ'թողնիմ, քարերը կդառնան ու ալուր կէղնիս։

Բազրգյանը ելավ ու ըսավ.— Էս չէղավ, մե անգամն էլ դու պայ մտի, ես ման գամ, թե օր գտա՝ չեմ տա, թե օր չէ՝ ա՛ռ, հալալ էղնի։

Տղեն էլ մտածեց. «Էսիկ հալա ֆանդ ու ֆել գիտե, ես ի՞նչ էնեմ, ուրտեղ պայ մտնիմ, իմ ումուդս էլ մնաց ձին», ըսավ.— Խփե բազրդյան աչքերդ,— ինքը դեպի ձիուն գնաց ու ձիուն ըսավ.— Դու ու քու աստված, էս անգամն էլ դու պրծեցրու։

Ձին ըսավ.— Մի վախենա, արի քովս, արի յալիցս մազմ քաշե դի ուսիդ վրա ու քովս կայնի, էլ չես էրևա։

Էնպես էլ արավ։

Բազրգյանի աչքերը բացին։ Բազրգյանը ման էկավ տղին, շատ ման էկավ, չգտավ ու ճվաց թե.— Տղա որտեղ օրա ես դուս արի, սինիս հալալ էղնի քեզի մորդ կաթի պես, տվի որ տվի։

Տղեն մազը վրցեն վեր գցեց ու էկավ բազրգյանի քովը։

Բազրգյանը հրամայեց ծառաներին՝ սինին բերեն տան տղին։ Բերին տվին տղին։ Տղեն էլ ձին սարքեց, սինին առավ գնաց։ Մե խելի հեռացավ բազրգյանեն, բազրգյանը նորեն տղին ետ կանչեց ու ըսավ.— Այ տղա, էդ սինուն մե մարիֆաթ էլ ունի։

Ըսավ.— Ի՞նչ է բազրգյան։

— Թե դու որ էդ սինին թողնես, տեղ էրթաս ու ասես. «Ով որ գուքա քեզ ձեռ կուտա կ'բռնես մինչև ես գամ»։

Ու տղեն մնաս բարև արավ բազրգյանին ու առավ սինին, հեծավ ձին ճամբա ընկավ։ Գնաց, գնաց, շատ ու քիչը աստված գիտե, հասավ իրան հայրենի քաղաքի ֆողը։ Էնտեղ մե մարդմ ռաստ էկավ իրան հոր քաղաքեն, տղեն կանչեց իրան մոտը ու ըսավ.— Կէրթաս քաղաք, թագավորի տղոնցը կըսես թե. «Ձեր կորած ախպերը եկել է ձեզ կ'կանչե, օր դեմ էրթաք»։ Մե բուռ ոսկի տվեց ու ճամբեց, իսկ ինքը ձին բաց թողեց, որ արածե դաշտի մեջը։

Ախպրտանքը ելան, իմանալու պես կառետներ լծել տվին, զորք թոփ էրին ու գնացին դեմ, երբ օր հասան եղբոր մոտ, իրար փաթթրվեցին ու երկար ժամանակ այդպես մնացին, իրար համբուրեցին ու հետո ըսին՝ էրթանք տուն եղբայր։

Նոր գալող եղբայրն ըսավ.— Նստեք մի քիչ հաց ուտենք ու ետև էրթանք։

Իսկ մյուս եղբայրներն ըսին.— Դու էս ձիուց սավայի բան չունիս, ինչո՞վ պտի կերակրես էսքան զորքը։

Նա թե.— Հրամայեցեք ձեր զորքին թող նստին։— Նրանք էլ եկան, նստան։ Բերավ պզտի եղբայրը մե պզտի սինիմ գրավ մեջտեղը ու ըսավ՝ սինի բացվի։— Էն սհաթը սինին բացվավ, բիտտուն

ետ ետ գնացին։ Շատ շելնիք էղնելուս շատ կբացվի, քչին՝ քիչ ու մեջը հազարան տեսակ նազ ու նամաթ խմիչք ու ինչ որ աստված լավ բան ուտելիք ստեղծել է կգտնվի։ Կուշտ կերան խմեցին ու ընկան ճանբա։

Փոքր եղբայրը ըսավ.— Ես ձեր տուն չեմ գա, ինձի մեկ ուրիշ տեղմ քիրեյեք։

Ախպրտինքն էլ հասնելու պես մե լավ տունմ քիրեյեցին ու ախպորը հանձնեցին։ Իրանք ախպորը տարան իշեցրին էն տունը, իրանք էլ գնացին իրանց տուն։ Մեկ ամիս գնացին-եկան ախպոր քովը, կարոտներն առան ու ըսին.— Եղբար մենք ավղուշի սովոր ենք, էգուց պտի էրթանք, գուքա՞ս հետներս։

Նա ըսավ.— Ինչի չէ, գուքամ։

Ու ելան առավոտը ձիաններ սարքել տվին, ախպորն էլ ըսին, հեծան ձիանները ու ընկան ճանբա։ Մե քիչմ գնացել, չէին գնացել, պզտի ախպերն ըսավ.— Ես մեկ բան եմ մտահան էրել, թողեք որ էրթամ բերեմ։

Նրանք ըսին՝ գնա։ Ետ դարձավ էկավ իրան տուն, սինին պատեն կախած էր, սինուն ըսավ.— Սինի, քեզի ով որ գուքա կը վերցընելու, կ'բռնես մինչև ես գամ,— ըսավ ու գնաց հասավ ախպերտանցը։

Թող էդոնք էրթան ավղուշ, մենք դառնանք թագավորի տունը, թե հարսները ինչ կէնեն։

Թագավորի պզտի տղեն ինչ էկել էր խառնված էին, վազիր նազիրը չէին էկել։ Ավղուշ գնացին թե չէ, էլի էկան հարսների քովը, երկար խորաթա էրին, ժամանակ անցրին, ետև մենձ տեքերկինը ըսավ պզտրկին.— Ելի կերակուր էրա, ուտեն էրթան, քանի մերոնք չեն էկե, թե չէ, հիմա ուրտեղ օր է դուքան։

Պզտի տեքերկինը ըսավ.— Էլ ի՞նչ խառնվինք իրար, էրթանք տեքորս տունը, սինին վեր բերենք, հաց ուտենք ու գանք։

Նրանք էլ ըսին.— Լավ մտքներս գցիր, էրթանք։

Ելան գնացին, նստան քիչ խորաթա էրին, մենձ տեքերկինը պզտրկին ըսավ.— Ե՛լ, սինին բե։

Նա էլ ելավ, որ պատեն կախած սինին վար բերե։ Ձեռը մեկնեց սինին իշեցնելու, ձեռը կպավ սինուց ու ըսավ.— Ես կպա սինուցը։

Նրանք ըսին.— Ցարանության վախտը չէ, դեհ, թեզ էրա բե,— ըսին, ու իրան սիրական վազիրը ելավ, օր քաշե բերե, քաշելու պես էն էլ կպավ էնոր պոչեն։ Մենձ տեքերկինը, հերսը ելած, վեր ելավ ու ըսավ.

— Է՞հ, յարանության վախտը չէ,— ըսավ, ու քաշեց վազիրի պոչեն, քաշելու պես էն էլ կպավ վազիրի պոչեն,— ըսավ,— Ես էլ կպա՞։

Նազիրի սիրտը ցավաց, թե իրան սիրականն էլ կպավ, վեր ելավ տեղեն, ուժով թափ տվեց, թե պրծացնե, նա էլ կպավ նրա պոչեն։ Քիչ ետև պառավը եկավ ներս մտավ, տեսավ որ պոչ պոչեն են կպել, ըսավ որ.— Տարի օրը յարանությունեն չկշտացա՞ք, յարանության վախտը չէ, պրծեք, հիմի դուքան։

Նրանք ըսին.— Որ էդպես է, դեհ արի մեզ իրարեց պոկե։

Պառավն էլ հերսը ելած գնաց նազիրի պոչեն քաշեց թե չէ, էն էլ կպավ նազիրի պոչեն, ու էդպես մնացին մի քիչ։ Մեկ էլ մեկ հալիվորմ Սիմոն անունով, թութուն չիբուղը լցրել էր, կրակ չուներ, էդ դռնեն նես մտավ, որ կրակ ուզե, տեսավ որ բիրադի պոչ պոչի կպած մնացել են, ըսավ.— Էս ի՞նչ բան է։

Նրանք էլ թե.— Ա՛յ հալիվոր, արի թափ տուր մեզի մենք պրծնենք, ինչքան օր օսկի գուզես կուտանք։

Սիմոն ամին էլ օսկու թամային հպարտ մոտեցավ պառավի պոչեն քաշեց թե չէ, նա էլ կպավ պառավի պոչին։

Քիչ հետև տղեքը էկան, էրկուսը գնացին իրանց տուն, պզտի տղեն էլ ետ եկավ իրան օթախը, տեսավ որ, ի՞նչ տեսնի, շարվել են իրար ետևե։ Ձեն չհանեց, նստավ ու պապիրոզը քաշեց, հետև Սիմոն ամուն ըսավ.— Հլա էսոնք սուչ ունեին, դո՞ւ ինչի ես կպել այ հալիվոր։

Նա ըսավ.— Ես միամիտ էկա թութուն չիբուղիս կրակ ուզեի, մեկ էլ տեսա էսոնք իրար էին կպել, կանչեցին ինձի թե. «Ա՛յ հալիվոր ինչ օր գուզես քեզի կուտանք, թաքիլա մեզի պրծացրու իրարուց», ես էլ պառվեն քաշելու պես, կպա պոչեն։

— Որ էդպես է,— ըսավ,— Սինի՛, այս հալիվորին բաց թող էրթա։

Էն սհաթը բաց թողեց։ Հալիվորին ըսավ թե.— Գնա, Սիմոն ամի։

Թագավորի մենծ տղեքը գնացին, տեսան որ կնանիքը տունը չեն, ըսին.— Էն է, գնացել են պզտի տեքոր տունը սարքելու,— ու ելան էկան ախպոր տունը, տեսան որ ախպերը նստել է պապիրոզ կքաշե, իսկ կնդիքը ու նազիր վազիրը թավտավա կը խազան։

Ախպորը ըսին.— Էս ի՞նչ բան է։

Նա էլ ըսավ.— Տեսեք թե ինչ բան է, էս բանը նորվա չէ, իմ կորածս օրվանեն էս բանը կար ու իմ կորցնելուս պատճառն սրանք

էին, որ ես իրանց սրոը դուս չգցեմ։ Ուզեցին ինձ սպանել տան, համա էլ աստված իմ կողմես էր, քա՞նի անգամ էս պառավին կաշառք էին տվել ու ղրկել, որ իմ կյանքս վերշացնե, համա աստված անմեղի աստվածն է, ինձի ազատեց։

Այստեղ փոքր եղբայրը բոլոր գլխու անցածը պատմեց ախպերտոցը, թե ինչ են արել խեղճի դլոխը ու ըսավ.— Հիմի դուք գիտեք, ինչպես օր գուզեք դատեցեք։

Նրանք էն սհաթը հրամայեցին հինգ հատ խամ ջորի բերեն, ծառաները գնացին ջորիները բերին, ու ախպորն ըսին.— Հրամայե սինուն, թող էդոնց բաց թողնի օր ջորիքի պոչեն կապենք։

Ու այնպես էլ արին, կապեցին ու բաց թողին։ Ջորիքը գնացին սար ու ձոր պտտվան ու իրիկվան մեկ-մեկ չոր քյալեքը պոչերին կպած տուն էկան։

Մենծ ախպրտիքը ըսին.— Դե՛հ, օր այդպես է արի քեզի նշանենք, կարգենք ու նստի թագավոր։ Մեր հայրական կայքը քեզ է արժան։

Այնպես էլ արին։ Օխտը զոր, օխտը գիշեր հարսնիք արին, կերան խմեցին։ Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։